ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

11.04.2017թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ 38/17

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի (այսուհետ նաև՝ Խորհուրդ) բողոքը քննող հանձնաժողովը՝ գործելով Խորհրդի անունից, քննելով «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի 24.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից նյութերը (այսուհետ նաև՝ ԳԲԽ-38/17 բողոք), «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի 30.03.2017թ. գրությունը, ինչպես նաև ԳԲԽ-38/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի 07.04.2017թ. ներկայացրած եզրակացությունը, պարզեց հետևյալը.

1. «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն) 24.03.2017թ. ներկայացված բողոքով «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն (այսուհետ նաև՝ Ընկերություն) հայտնել է, որ «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը 06.03.2017թ. հայտարարել է պահնորդական ծառայության մրցույթ, որ կայացել է 16.03.2017թ. և հրապարակվել է 23.03.2017թ.-ին: Պահնորդական ծառայության նախահաշվային գինը գնումների պլանում առաջարկվել է 6 000 000 ՀՀ դրամ: Պահնորդական ծառայության տեխնիկական բնութագիր – գնման ժամանակացույցի «Պահպանության կառուցվածք» բաժնում նշված է, որ պահնորդական ծառայությունն իրականացվելու է շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, ընդ որում՝

- մեկ պահակակետ՝ շաբաթական յոթ օր, քսանչորսժամյա պահնորդական ծառայություն առնվազն մեկ պահնորդի միջոցով,
- մեկ պահակակետ՝ շաբաթական հինգ օր (աշխատանքային օրերին ժամը 09:00-ից մինչև 18:00, առնվազն մեկ պահնորդի միջոցով,

□ ազդանշանային համակարգի տեղադրում և միացում պահնորդական ծառայություն իրականացնող միասնական կենտրոնացված հսկման համակարգին երաշխիքային սպասարկումով,

□ անհրաժեշտության դեպքում լրացուցիչ անվտանգության տեսախցիկների տեղադրում/ առավելագույնը 2 հատ տեսախցիկ և մինչև 150 մ համապատասխան մալուխի օգնությամբ/ պատվիրատուի նշված հատվածում և դրանց միացումը պահնորդական ծառայություն իրականացնող ընկերության միասնական կենտրոնացված տեսահսկման համակարգին, ինպես նաև այդ տեսախցիկների հետագա երաշխիքային ապասարկում:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի համաձայն՝ հրավերը պետք է պարունակի նշում այն մասին, որ առաջարկվող գինը ապրանքների, աշխատանքների և ծառայությունների արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից, որի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով:

Առաջարկվող գումարով ոչ մի կերպ հնարավոր չէ իրականացնել պահանջվող ծառայությունները, հետևաբար՝ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն, որը ներկայումս «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ում իրականացնում է պահնորդական ծառայություն, չի մասնակցել մրցույթին:

Բացի վերոգրյալը և ամենակարևորը պահանջվում է նաև ազդանշանային համակարգի տեսախցիկների տեղադրում, որոնք մասնավոր պահնորդական ծառայություն իրականացնող կազմակերպությունների իրավասության մեջ չեն մտնում և արգելված է օրենքով:

«Մասնավոր պահնորդական» գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունները առևտրային այլ գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեն:

Պատվիրատուի կողմից նշված անօրինական և չհիմնավորված պահանջները «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ին զրկել են մրցույթի մասնակցության հայտ ներկայացնելու հնարավորությունից:

Ելնելով վերոգրյալից՝ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն խնդրել է Խորհրդին դադարեցնել «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի գնահատող հանձնաժողովի 16.03.2017թ. N 2 արձանագրությամբ կայացված որոշումները:

Ընկերության ներկայացուցիչները, մասնակցելով Կենտրոնում 30.03.2017թ. ժամը 17:15-ին կայացած ԳԲԽ-38/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել են բողոքով հայտնած դիրքորոշումը:

2. **<u>«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը</u>**

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 30.03.2017թ. գրությամբ հայտնել է, որ 06.03.2017թ. հայտարարել է «ԱԱ-ՊԸԾՁԲ-17/01 ծածկագրով պահնորդական ծառայությունների ձեռքբերման նպատակով մրցույթ, որը սահմանված կարգով հրապարակվել է:

24.03.2017թ. «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդին ներկայացված բողոքով խնդրել է դադարեցնել «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի գնահատող հանձնաժողովի 16.03.2017թ. N 2 արձանագրությամբ կայացված որոշումները, սակայն «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ը գտնում է, որ ներկայացված բողոքը անհիմն է և ենթակա է մերժման հետյալ պատճառաբանությամբ՝

□ որպես բողոքի իրավական հիմք Ընկերությունը նշել է 25-րդ հոդվածը, որը տվյալ դեպքում կիրառելի չէ, քանի որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետև նաև՝ Օրենք) 25-րդ հոդվածը կոչված է կարգավորելու գնման գործընթացում հայտերին վերաբերող իրավահարաբերությունները:

□ պատվիրատուն գործող օրենսդրության պահանջներին համապատասխան կազմել և հրապարակել է ընթացակարգի հրավերը, որի վերաբերյալ որևէ բողոք, այդ թվում նաև բողոք բերողի կողմից չի ներկայացվել և Պատվիրատուի կողմից ապահովվել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, համաձայն որի՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

□ ինչ վերաբերվում է բողոքաբերի այն փաստարկին, որ պահանջվող ծառայությունը հնարավոր չէ մատուցել նախահաշվային գնով, ապա դա միայն վերջինիս վարքագծի երևակայության արդյունքն է, քանի որ հայտարարված ընթացակարգին մասնակցել է թվով երկու կազմակերպություն, որոնք ներկայացրել են համապատասխանաբար 4 884 000 և 5 880 000 ՀՀ դրամ գնային առաջարկներ:

 պահնորդական ծառայությունները տեխնիկական միջոցների, մասնավորապես՝ ազդանշանային համակարգերի և տեսախցիկների միջոցով, կիրառմամբ իրականացնելու վերաբերյալ բողոք բերողի փաստարկները ևս մտացածին են և զուրկ են որևէ իրավական հիմնավորումից:

 բողոքաբերը նշում է, որ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածը արգելում է պահնորդական գործունեություն իրականացնող կազմակերպություններին զբաղվելու առևտրային այլ գործունեությամբ: Այս կապակցությամբ հայտնում ենք, որ ազդանշանային համակարգերի և տեսախցիկների կիրառումը, մասնավոր պահնորդական ծառայություն մատուցելիս, չի կարող հանդիսանալ առանձին առևտրային գործունեություն: Ավելին՝ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքը պարտավորեցնում է պահնորդական կազմակերպությանն իր աշխատակցին, ի թիվս այլ միջոցների, տրամադրել նաև տեխնիկական միջոցներ:

 «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պահնորդական կազմակերպությունը պարտավոր է պահնորդին (թիկնապահին) տրամադրել հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական, զենք, հատուկ և տեխնիկական միջոցներ:

 նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ իրենց պարտականությունները կատարելիս պահնորդները (թիկնապահները) կարող են օգտագործել միայն պահնորդական կազմակերպության սեփականությունը համարվող կամ օրինական տիրապետման տակ գտնվող զենքը, հատուկ և տեխնիկական միջոցները:

 նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելիս իրավունք ունի օգտագործելու պահպանության և այլ տեխնիկական միջոցներ:

 չնայած այն հանգամանքին, որ օրենսդիրը օրենքում սպառիչ կերպով չի սահմանել տեխնիկական միջոցների ցանկը, սակայն Պատվիրատուի դիրքորոշմամբ ազդանշանային համակարգերը և տեսախցկիները հանդիսանում են տեխնիկական միջոցներ:

 բողոքաբերը խնդրել է դադարեցնել «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի գնահատող հանձնաժողովի 16.03.2017թ. N 2 արձանագրությամբ կայացված որոշումները, սակայն վիճարկվող արձանագրությունը բացառապես վերաբերում է ընթացակարգի

հայտերի բացման, գնահատման, առաջին և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշմանը:

 16.03.2017թ. N 2 արձանագրությունը կայացվել է գործող օրենսդրության պահանջներին համապատասխան և դա դադարեցնելու որևէ իրավական հիմք առկա չէ:

Ամփոփելով գրությունը՝ Պատվիրատուն հայտնել է, որ բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի ներկայացուցիչները, մասնակցելով Կենտրոնում 30.03.2017թ. ժամը 17:15-ին կայացած ԳԲԽ-38/17 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, պնդել են 30.03.2017թ. հայտնած առարկությունները:

3. ԳԲԽ-38/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲԽ-18/17 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1.«Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի կողմից պահնորդական ծառայության ձեռքբերման նպատակով 06.03.2017թ. կազմակերպվել է «ԱԱ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգ:

2. Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, պահպանության կառուցվածք բաժնում նշված է, որ պահնորդական ծառայությունն իրականացվելու է շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, ընդ որում՝

 մեկ պահակակետ՝ շաբաթական յոթ օր, քսանչորսժամյա պահնորդական ծառայություն՝ առնվազն մեկ պահնորդի միջոցով,

 մեկ պահակակետ՝ շաբաթական հինգ օր (աշխատանքային օրերին), ժամը 09:00-ից մինչև 18:00, առնվազն մեկ պահնորդի միջոցով:

ազդանշանային համակարգի տեղադրում և միացում պահնորդական ծառայություն իրականացնող ընկերության միասնական կենտրոնացված հսկման համակարգին երաշքիքային սպասարկումով.

անհրաժեշտության դեպքում լրացուցիչ անվտանգության տեսախցիկների տեղադրում /առավելագույնը 2 հատ տեսախցիկ և մինչև 150 մ համապատասխան մալուխի օգնությամբ/ պատվիրատուի նշված հատվածում և դրանց միացումը պահնորդական ծառայություն իրականացնող ընկերության միասնական կենտրոնացված

տեսահսկման համակարգին, ինչպես նաև այդ տեսախցիկների հետագա երաշխիքային սպասարկում:

3. Բողոքաբերը ներկայացված բողոքով հայտնել է, որ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունները առևտրային այլ գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեն, ուստի Պատվիրատուի կողմից հրավերով նշված անօրինական և չհիմնավորված պահանջները «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ին զրկել են մրցույթի մասնակցության հայտ ներկայացնելու հնարավորությունից:

4. Պահնորդական ծառայության նախահաշվային գինը գնումների պլանով սահմանվել է 6 000 000 ՀՀ դրամ:

5. Բողոքաբերը ներկայացված բողոքով հայտնել է, որ նման գումարով ոչ մի կերպ հնարավոր չէ իրականացնել պահանջվող ծառայությունները, հետևաբար՝ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն չի մասնակցել մրցույթին:

6. Պատվիրատուն 30.03.2017թ. գրությամբ հայտնել է, որ հայտարարված ընթացակարգին մասնակցել է թվով երկու կազմակերպություն, որոնք ներկայացրել են համապատասխանաբար 4 884 000 և 5 880 000 ՀՀ դրամ գնային առաջարկներ:

<u>4. ԳԲԽ-38/17 բողոքի վերաբերյալ «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը դիրքորոշումը</u>

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը Խորհրդին է ներկայացրել իր 07.04.2017թ. եզրակացությունը և առաջարկել է «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի 24.03.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

<u>5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը</u>

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը, ուսումնասիրելով «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի 24.03.2017թ. ներկայացրած բողոքը և կից փաստաթղթերը, «Արդարադատության ակադեմիա» ՊՈԱԿ-ի 30.03.2017թ. գրությունը, «ԱԱ-ՊԸԾՁԲ-17/01» ծածկագրով պարզեցված ընթացակարգի հրավերը, «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի համաձայն՝ չեն կարող սահմանվել մասնակցի՝ գնումներին մասնակցելու իրավունքի և որակավորման հետ կապված այնպիսի

չափանիշներ, որոնք խտրական են և սահմանափակում են մրցակցությունը, անհիմն կերպով բարդացնում կամ պարզեցնում են հնարավոր մասնակցությունը գնման գործընթացին:

Օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին ու 2-րդ ենթակետերի համաձայն՝ գնման առարկայի բնութագրերը՝

1) պետք է մրցակցության հավասար պայմաններ ապահովեն հնարավոր մասնակիցների համար.

2) չպետք է հանգեցնեն գնումների գործընթացում մրցակցության համար չհիմնավորված խոչընդոտների առաջացմանը:

«Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ***պահնորդական կազմակերպությունը պարտավոր է պահնորդին (թիկնապահին) զրահադրել*** հատուկ համազգեստ, անձը հաստատող վկայական, զենք, հատուկ և ***տեխնիկական միջոցներ***:

Նույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ ***իրենց պարտականությունները կատարելիս պահնորդները (թիկնապահները) կարող են օգտագործել միայն պահնորդական կազմակերպության սեփականությունը համարվող կամ օրինական տիրապետման տակ գտնվող*** զենքը, հատուկ և ***տեխնիկական միջոցները***:

Նույն օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունը պահնորդական ծառայություններ մատուցելիս իրավունք ունի օգտագործելու պահպանության և այլ տեխնիկական միջոցներ:

Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ի՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի, պահպանության կառուցվածք բաժնում նշված է, որ պահնորդական ծառայությունն իրականացվելու է շուրջօրյա՝ առանց հանգստյան և տոնական օրերի, ընդ որում՝

□ մեկ պահակակետ՝ շաբաթական յոթ օր, քսանչորսժամյա պահնորդական ծառայություն՝ առնվազն մեկ պահնորդի միջոցով,

□ մեկ պահակակետ՝ շաբաթական հինգ օր (աշխատանքային օրերին), ժամը 09:00-ից մինչև 18:00, առնվազն մեկ պահնորդի միջոցով:

□ ***ազդանշանային համակարգի տեղադրում և միացում պահնորդական ծառայություն իրականացնող ընկերության միասնական կենտրոնացված հսկման համակարգին երաշքիքային սպասարկումով.***

անհրաժեշտության դեպքում լրացուցիչ անվտանգության տեսախցիկների տեղադրում /առավելագույնը 2 հատ տեսախցիկ և մինչև 150 մ համապատասխան մալուխի օգնությամբ/ պատվիրատուի նշված հատվածում և դրանց միացումը պահնորդական ծառայություն իրականացնող ընկերության միասնական կենտրոնացված տեսահսկման համակարգին, ինչպես նաև այդ տեսախցիկների հետագա երաշխիքային սպասարկում:

Բողոքաբերը ներկայացված բողոքով հայտնել է, որ «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ մասնավոր պահնորդական կազմակերպությունները առևտրային այլ գործունեությամբ զբաղվելու իրավունք չունեն, ուստի Պատվիրատուի կողմից հրավերով նշված անօրինական և չհիմնավորված պահանջները «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ին զրկել են մրցույթի մասնակցության հայտ ներկայացնելու հնարավորությունից:

Պահնորդական ծառայության նախահաշվային գինը Պատվիրատուի գնումների պլանով սահմանվել է 6 000 000 ՀՀ դրամ:

Բողոքաբերը ներկայացված բողոքով հայտնել է, որ նման գումարով ոչ մի կերպ հնարավոր չէ իրականացնել պահանջվող ծառայությունները, հետևաբար՝ «Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ն չի մասնակցել մրցույթին:

Պատվիրատուն գրությամբ հայտնել է, որ ***հայտարարված ընթացակարգին մասնակցել է թվով երկու կազմակերպություն, որոնք ներկայացրել են համապատասխանաբար 4 884 000 և 5 880 000 ՀՀ դրամ գնային առաջարկներ:***

Ելնելով վերոգրյալից՝ Խորհուրդը գտնում է, որ Պատվիրատուի կողմից սահմանված գինը չի կարող հիմք հանդիսանալ գնահատող հանձնաժողովի կողմից կայացված որոշումների դադարեցման համար: Ինչ վերաբերվում է Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ով՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով, սահմանված պահանջների խստականությանը, ապա Խորհուրդը ուսումնասիրելով Ընթացակարգի հրավերը, «Մասնավոր պահնորդական գործունեության մասին» ՀՀ օրենքով վկայակոչված դրույթները գտնում է, որ Պատվիրատուն Ընթացակարգի հրավերի Հավելված 1-ը՝ տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը, կազմել է գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների պահպանմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

«Պանտեռա Սիքյուրիթի» ՍՊԸ-ի կողմից 24.03.2017թ. ներկայացրած բողոքը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Բողոքը քննող հանձնաժողով՝

Նախագահ՝ **Գևորգ Հայրապետյան**

Անդամ՝ **Արամ Գրիգորյան**